ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2019, հ. 72, N 2,
Известия НАН РА Науки о Земле, 2019, т. 72, N 2,
Proceedings NAS RA, Earth Sciences, 2019, v. 72, N 2,

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՉԻՔԳՅՈԶՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

Այս տարի լրացավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) առաջատար գիտական աշխատող, երկրաբանա-միներալոգիական գիտությունների թեկնածու, ազատամարտիկ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մարտական Խաչ» շքանշանի ասպետ, Սիմոն Հովհաննեսի Աչիքգյոզյանի ծննդյան 80-ամյակը:

Ս.Հ.Աչիքգյոզյանը ծնվել է 1939թ. փետրվարի 6-ին Ռումինիայի Գալաց քաղաքում: Նրա հայրը մի մեծ գերդաստանի ներկայացուցիչ էր, գերդաստան, որի 86 անդամներից թուրքական ջարդերից փրկվեցին միայն 8-ը:

1946թ. Աչիքգյոզյանների ընտանիքը տեղափոխվեց Հայաստան: 1955թ. Ս.Աչիքգյոզյանն արծաթե մեդալով ավարտեց դպրոցը և ընդունվեց Երևանի Պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետը:

1960թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը նա աշխատանքի է անցնում ԵԳԻ «Օգտակար հանածոների» բաժնում, որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջը:

1970թ. Ս.Աչիքգյոզյանը հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր Տանձուտ-Չիբուխլի հանքային դաշտերի հիդրոթերմալ փոփոխված ապարների ուսումնասիրությանը՝ անմիջականորեն կապված լինելով պղնձի հանքավայրերի որոնման և հայտնաբերման հետ:

Հետագա տարիների ընթացքում նա իր գործընկերների հետ համատեղ կատարեց Կապանի հանքային շրջանի և հարակից տարածքների երկրաբանական կառուցվածքի և հանքաբերության մանրակրկիտ ուսումնասիրություններ, ինչի արդյունքում տրվեցին կոնկրետ հանձնարարականներ որոնողահետախուզական աշխատանքների վարման ուղղությամբ:

Ս.Աչիքգյոզյանը մշտապես ջանում էր ընդլայնել իր գիտելիքների շրջանակը՝ ընդգրկելով մագմատիզմի, երկրադինամիկայի, հանքագոյացման մի շարք հիմնահարցեր: 1985թ. նրա հրատարակված “О геодинамическом развитии и металлогении Малого Кавказа в мезокайно-

зое” հոդվածը դրա փայլուն օրինակն էր: Նա առաջինն էր հայ գիտնականներից, ով ելնելով երկրաբանության ժամանակակից պարադիգմայից, նորովի բացատրեց Փոքր Կովկասի մետաղածնությունը և մետաղային հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները:

Ս.Աչիքգյոզյանի հետազոտությունների արդյունքները ամփոփվել են 70-ից ավելի գիտական աշխատություններում, բազմիցս ներկայացվել միջազգային, համամիութենական և հանրապետական գիտաժողովներում:

Ս.Աչիքգյոզյանը շուրջ 10 տարի, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, դասավանդել է Երևանի Պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետում: Նրա դասախոսություններն աչքի ընկնելով բարձր մակարդակով, հաճախ վերածվում էին ուսանողների դաստիարակության յուրօրինակ դասերի: Ս.Աչիքգյոզյանը լայն հետաքրքրությունների տեր անձնավորություն էր, գրում էր պատմվածքներ և բանաստեղծություններ, երգում և նվագում էր, շուրջ 15 տարի Խոր Վիրապի դպրաց դասում մասնակցում էր կիրակնօրյա պատարագներին:

Ս.Աչիքգյոզյանի կյանքում մի նոր էջ բացեց Արցախյան շարժումը: Նա անդամագրվեց Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, ապա միացավ «Արաբո» մարտական ջոկատին և ակտիվ մասնակցություն ունեցավ տարբեր շրջանների պաշտպանական մարտերում: Ջոկատում լինելով ամենատարեցը, ինչի համար նրան «Դեդ» էին անվանում, նա չէր զիջում երիտասարդներին իր ֆիզիկական պատրաստությամբ և պատրաստ էր օգնել նրանց թե՛ գործով, թե՛ խորհուրդներով: 1991թ. ապրիլին խորհրդային զորքերը, նպատակ ունենալով հայաթափ անել Արցախը, սկսեցին ռազմական գործողություններ Գետաշենի և Մարտունաշենի խաղաղ բնակչության դեմ (операция “Кольцо”): «Արաբո» ջոկատի հրամանատարի վիրավորվելուց և Երևան տեղափոխվելուց հետո ջոկատի հրամանատարի պարտականությունները ստանձնեց և փայլուն կատարեց Ս.Աչիքգյոզյանը: Նա կազմակերպեց խաղաղ բնակչության տեղափոխումը թիկունք, իսկ ինքը մի քանի ընկերների հետ իր վրա վերցրեց խորհրդային բանակի և ադրբեջանական ՕՄՕՀ-ի հարվածը: Ծանր վիրավորվելուց հետո, իր երիտասարդ ընկերների կյանքը փրկելու համար Ս.Աչիքգյոզյանը հրամայեց նրանց հեռանալ, իսկ ինքը մինչև վերջին շունչը կռվեց և զոհվեց որպես հերոս:

1991թ. մայիսի 4-ին Երևանում՝ Ազատության հրապարակում, սգո հանրահավաքի բազմահազար մասնակիցները հրաժեշտ տվեցին Ս.Աչիքգյոզյանին և Գետաշենում զոհված նրա մարտական ընկերներին:

Հայ ժողովուրդը կորցրեց իր նվիրյալներից մեկին, իսկ երկրաբանական հանրությունը՝ տաղանդավոր, խոստումնալից գիտնականի:

Ս.Աչիքգյոզյանի և նրա մարտական ընկերների հիշատակը միշտ վառ կմնա հայ ժողովրդի ազատագրական պայքարի տարեգրության մեջ:

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ Ռ.Լ.Մելքոնյան